ՀԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԻՑ

Նոյեմբերի 30-ին Ստ. Շահումյանի անվան պալատում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատները հավաքվեցին շարունակելու Գերագույն խորհրդի արտահերթ 10-րդ նստաշրջանի աշխատանքը:

Դեպուտատները հաստատեցին հետևյալ օրակարգը.

1. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Հ. Ոսկանյանի հաղորդումը ԽՍՀՄ Գերագույն խորհրդում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» հարցի քննարկման արդյունքների մասին:

2. Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի կոմիտեի բանաձևի առթիվ ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարության մասին:

3. «Ռեգիոնում իրավիճակի սրման ու Հայաստանի և ԼՂԻՄ-ի շրջափակման վերացման անհետաձգելի միջոցառումների մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման իրականացման ընթացքի մասին:

4. Ադրբեջանական ԽՍՀ-ին սահմանամերձ շրջանների հայ ազգաբնակչության կյանքի անվտանգության ապահովության մասին:

5. Փախստականների տեղավորման հարցի վերաբերյալ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ԽՍՀ-ի Մինիստրների խորհրդի ընդունած որոշումների կատարման ընթացքի և այդ աշխատանքի ուժեղացման լրացուցիչ միջոցառումների մասին:

6. Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի դիմումի մասին:

7. Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ պայմանագրով հաստատված պարտավորությունների կատարման և այն վերանայելու հարցերի մասին:

8. 1921 թվականի մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի քաղաքական և իրավական գնահատման մասին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հանձնաժողովի հաղորդման և ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան երկրկոմի՝ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ 1921 թվականի հուլիսի 5-ի որոշման մասին:

Մի խումբ դեպուտատների առաջարկությամբ որոշվեց ԼՂԻՄ-ին վերաբերող հարցերը քննարկել Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստում:

«ԽՍՀՄ Գերագույն խորհրդում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» հարցի քննարկման արդյունքների մասին» հաղորդումով հանդես եկավ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ **Հ. Ոսկանյանը:**

Ծավալվեց մտքերի լայն փոխանակություն: Եղույթ ունեցան՝ **Վ. Գրիգորյանը** (Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ), դեպուտատներ **Հ. Բաղդասարյանը, Զ. Անանյանը,** ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Զ. Բալայանը,** Արցախի հոգևոր թեմի առաջնորդ **Պարգև Սրբազանը,** ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Գ. Խանջյանը,** Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտի դոցենտ **Բ. Սիսյանը,** ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Լ. Հարությունյանը,** Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ **Վ. Աղայանը:** Հայտարարություններով հանդես եկան Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի դեպուտատ **Ս. Մուրադյանը,** պատմաբան **Վ. Միքայելյանը** և ուրիշներ:

Քննարկված հարցի վերաբերյալ որոշման նախագծի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի կոմիտեի բանաձևի առթիվ ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարության կապակցությամբ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի հայտարարության տեքստի մշակման համար ստեղծվեց հանձնաժողով:

Նիստում հրապարակվեցին Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի դիմումը՝ ուղղված Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին և այդ կապակցությամբ դեպուտատ **Լ. Տեր-Պետրոսյանի** հայտարարությունը:

Համապատասխան որոշման նախագիծ կազմելու համար նույնպես ստեղծվեց հանձնաժողով:

Երեկոյան նստաշրջանը շարունակում էր աշխատանքը:

(Արմենպրես)